ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Աստուծո ողորմությամբ, նոր տարվո սեմին կանգնած, քրիստոնեական մշտանորոգ հույզերով և հույսերով, ցնծությամբ կդիմավորենք մեծ ավետիսը մեր Տիրոջ և Փրկչի Ծննդյան և քաղցր երգը երկնքի հրեշտակներուն՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Երկյուղած ու բերկրյալ սրտով կերկրպագենք մանկացած Աստվածորդվույն մսուրին առաջ ու կաղոթենք մեր հոգվույն բովանդակ ջերմությամբ, որ երկնքի պատգամը լսելի դառնա մեր աշխարհի բոլոր մարդկանց ու երկրի վրա թագավորե արդարությունը և խաղաղությունը ազգություններու և պետություններու միջև:

Սուրբ Ծննդյան ավետիսով, սրտանց կշնորհավորենք Ձեզ և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն կհղենք Աստուծո օրհնությունը և Մեր հայրական բարի մաղթանքները Աթոռիդ նվիրյալ միաբանության և համայն Մեր հավատացյալ զավակներուն:

Թող անսասան և հավետ շեն մնա ձեր պատմական Աթոռը և միշտ Աստուծո օրհնության ներքև՝ մեր հավատավոր ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Շնորհք և սեր Տեառն մերո Հիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: